3566
hung lip li G

Ub.

2004

# ԿԱՐՃԱՌՕՏ
# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

---

Վասն շահապետութեանց Մանկանց
Դրանսիլվանիոյ Հայաքաղաքի

Իւր խարճիւք տպագրեցաւ

Ի ՎԻԵՆՆԱ

1834

Այս քրիստոնէական վարդապետութեան Թուղթը քննըլելով, և խորդըլելով, որ տպեցլի, Պատուելի Անկխտդրատդին պաշտօնաբար կհանձնիմք:

'Ի Հայաքաղաքն Յամի տեառն 1833. Դեկտեմբերի 18ին:

Տէր Յովհաննէս Շիմայեան,
Ժողովրդապետ Հայաստանեայց, և
Առաջնորդ Մօզդօկի:

Մարտօն Աբրահամ
Աղայ և Էջմիածնական
Վանահայրեր:

1870 ‖ 833

Որ տպեցլի, հաստատվեցաւ 'ի Հայոց քաղաքն Սամօշույվար. Դեկտեմբերի 24ին. 1833:

Անկխտդրատի քաղվածքէն:

Մարտօն Նովաչեան.
Աստուածատուր Պետրոս.

Մարտինոս Կոմիտասեան
'Ի Տեղի Նոտարի:

# ՀԱՄԱՌՕՏ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

---

Հրց. Ի՞նչ է քրիստոնէական վարդապետութիւնը։

Պտս. Է սորվեցնել ուղղափառ հաւատոյն ճշմարտութեանցը, վասն որոյ և այս փոքր թուղթս կանուանի քրիստոնէական։

Հրց. Քանի՞ գլխաւոր փայի մէջ կուտրվի այս քրիստոնէական վարդապետութիւնը։

Պտս. Հինգ գլխաւոր, ու մէկ աւելցուցած փայի մը մէջ։

Հրց. Որո՞նք են այս փայերը։

Պտս. Առաջինը է Հաւատը․

Երկուսումնը Յոյսը․

Իրեքումը Սէրը․

Չորսումը Օխտը խորհուրդը․

Հինկումը քրիստոնէական ճշմարտութիւնը․

Եւ վերջապէս աւելցուցած փայը այսինքն չորս ետի բաները։

---

## Գլուխ Ա.

### ՚Ի վերայ հաւատոյ։

Հրց. Ի՞նչ է ուղղափառ քրիստոնէական հաւատը։

Պտխ. Քրիստոնէական ուղղափառ հաւատն է Աստուծոյ պարգեւն, որնոր կուլուսաւորէ զմեր միտքը, ու կանէ, որ հաստատ հաւատամք ինչ որ Աստուած յայտնիլ է, և մայր սուրբ Եկեղեցին հաւատալու կուգնէ։

Հրց. Ի՞նչ պէտք է, որ ամէն խելահաս մարդ գիտնայ, ու հաւատայ որ փրկըվի։

Պտխ. Ամէն խելահաս մարդ պէտք է որ գիտնայ, և հաւատայ որ փրկըվի՝

Ա. Թէ մէկ Աստուած մը կայ։

Բ. Թէ Աստուած արդար դատաւոր է, ովոր զաղէկը կիպաշխըրշէ, ու խուծածը կիպատժէ։

Գ. Թէ իրեք Աստուածային անձինք են մի բնութեամբ, և մի Աստուածութեամբ Հայր, Որդի, և սուրբ Հոգի։

Դ. Թէ երկուսում Աստուածային անձն մարդ դարձիլ է, որ խաչին վրայ մեռնելով ազատէ զմեզ ՚ի գերութենէ սատանային։

Ե. Թէ մարդուն հոգին անմահ է։

Զ. Թէ մարդը առանց Աստուծոյ շնորհացը ոչ մէկ բարի գործք մը չի կարնայ անելու, որն որ հոգւոյ փրկութեան արժան ըլլար։

Հրց. Քանի՞ Աստուած կայ։

Պտխ. Մէկմը։

Հց. Քանի՞ անձն ունի։

Պտ. Երեք. այսինքն Հայր, Որդի, և սուրբ Հոգի։

Հց. Ինտո՞ւր կուանուանվին այս երեք անձն մէկ խօսքը։

Պտ. Ամենասուրբ Երրորդութիւն։

Հց. Ի՞նչ է Աստուած։

Պտ. Աստուած է ինքն իրմէն ամենակատար էութիւն։

Հց. Ո՞ր Աստուածային անձն ստեղծիլ է զաշխարհս։

Պտ. Հայրն Աստուած ստեղծիլ է զերկինքը, զգետի-
նը, և զամէն բանը։

Հց. Ինչո՞ւ համար ստեղծիլ է Աստուած զմարդը։

Պտ. Անոր համար, որ ճանչենայ, սիրէ, և պատուէ
զԱստուած, նորա ծառայութիւն անէ, և ետքը
փրկըվի։

Հց. Ո՞ր անձն փրկիլ է զմարդը։

Պտ. Որդին Աստուած երկուսում անձնը սուրբ Երրոր-
դութեանը։

Հց. Նմա՞նն է Որդին Աստուած Հօրն Աստուծոյ։

Պտ. Ինչպէս Աստուած ամէն բանին մէջ Որդին Աս-
տուած նմանն է Հօրն Աստուծոյ, ինչպէս մարդ
քան զհայրն ալ պզտիկ է։

Հց. Որդին՝ Աստուած ըլլալով, ինչպէս կրցաւ զմար-
դուն պարտքը Հօրն Աստուծոյ վճարելու։

Պտ. Որդին չէ ինչպէս Աստուած, հաթէ ինչպէս Աս-
տուածամարդ վճարեց զմարդուն պարտքը։

Հց. Ումէ՞ յղացաւ տիրամայր կոյսն զՔրիստոս։

Պտ. Հոգւոյն սրբոյ զօրութեամբն։

Հց. Քրիստոս ունի՞ Հայր։

Պտ. Քրիստոս ինչպէս Աստուած ունի զհայրն երկնաւոր,
ինչպէս մարդ չունի հայր։

Հց. Քրիստոս ունի՞ մայր։

Պէ. Ինչպէս մարդ ունի մայր զՄարիամ կոյս, ինչպէս Աստուած չունի մայր։

Հց. Քանի՞ բնութիւն կայ 'ի մէջ Յիսուսին։

Պէ. Երկուս Աստուածային, զի 'ի յաւիտենականէ Աստուած է, և մարդկային, զի ժամանակով 'ի մարդ դարձիլ է։

Հց. Ինչո՞վ փրկիլ է Որդին Աստուած զմարդը։

Պէ. Իւր չարչարանօքն, և խաչին մահուամբն։

Հց. Քրիստոսի մահուանը տեւանց Աստուածութիւնը միաւորված մնացի՞լէ հետ հոգւոյն, և հետ մարմնուն։

Պէ. Թէպէտ Քրիստոսի մահուանը ետև, հոգին մարմնէն բաժնըվեց, Աստուածութիւնը միշտ, և անդադար միավորված մնաց հետ հոգոյն, և հետ մարմնուն։

Հց. Քանո՞ւմ օրը յարիլ է Քրիստոս 'ի մեռելոց։

Պէ. Քրիստոս մահուանը ետեւանց երեքումը օրը յարիլ է 'ի մեռելոց։

Հց. Այս ատենը ուրուխ քալիլ է Քրիստոսի հոգին։

Պէ. Դժոխքը, որ անկից զսուրբ հոգիքը ազատէր։

Հց. Քրիստոս յարութեանը ետև քանո՞ւմ օրը համբարձիլ է յերկինքը։

Պէ. Քառասունում օրը, ու կինստի ընդ աջմէ հօր։

Հց. Պի գա՞յ դեռ մէկ անգամ մը նալ Քրիստոս։

Պէ. Պի գայ վերջի դատաստանին օրը որ դատէ զաշխարհս, այսինքն զբարի և զչար հոգիքը։

Հց. Քանո՞ւմ անձն է սուրբ երրորդութեանը Հոգին սուրբ Աստուած։

Պէ. Հոգին սուրբ Աստուած իրէքում անձն է սուրբ Երրորդութեանը։

Հց. Ուստի՞ կուբղխի Հոգին սուրբ:

Պխ. Հոգի սուրբ կուբղխի 'ի Հօրէ, և յՈրդւոյ որ է ընդ Հօր, և Որդւոյ մի Աստուած, մի կամօք, և մի բնութեամբ, մի զօրութեամբ, և մի տէրութեամբ:

Հց. Ի՞նչ է սուրբ Եկեղեցին:

Պխ. Սուրբ Եկեղեցին է ժողով ամէն հաւատացելոց որք մկրտած են, ու Քրիստոսի, և իւր փոխանորդին հնազանդ են:

Հց. Ո՞վէ Եկեղեցին աներևելի գլուխ:

Պխ. Ովէ զՅիսուս Քրիստոս:

Հց. Զո՞վ դրաւ Քրիստոս Մայր սուրբ Եկեղեցուն յերևելի գլուխ:

Պխ. ԶՊետրոս Առաքեալը. և զարա մահուանը ետև զամէն Հռովմէական պապ:

Հց. Քանի՞ բանէ կը լլանք ճանչենալու զճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի:

Պխ. Չորս բանէ. Ա. որ մէկ է. Բ. որ սուրբ է. Գ. որ կաթուղիկէ է. Դ. Առաքելական է:

Հց. Ո՞վէ Մայր սուրբ Եկեղեցին իշխանութիւն մեղքէ արձակելու:

Պխ. Ովէ, թէ մկրտութեան, և թէ ապաշխարութեանը խորհուրդին մէջ:

Հց. Մարդը մեռնելով 'ի յաւիտեան մեռած կը մնայ:

Պխ. Ոչ. չէ վերջի դատաստանին դիմաց մարմինդանը 'ի մեռելոց կելյարեն, և նորենը հետ իւր հօգլադըննումն կը միաւորվին:

Հց. Այս յարութեանը իւրեանց 'ի յաւիտեան կը ապրի՞ն թէ արդարները, և թէ մեղաւորքը:

Պխ. Թէ արդարները, և թէ մեղաւորքը 'ի յաւիտեան պի ապրին. բայց զանազան կերպիւ. զի արդարները երկնային փառացը մէջ յաւիտեան պի ուրախանան. մեղաւորքը դժոխային պատիժնուն մէջ յաւիտեան պի տանջըվին:

## Գլուխ Բ:

### Ի վերայ Յուսոյ:

Հց. Ի՞նչ է քրիստոնէական Յոյսը:

Պխ. Քրիստոնէական Յոյսն է Աստուծոյ պարգևը, որ կանէ, որ մեծ նիաթով Աստուծըմէ բովլմք զամէն բանը, ինչ որ ինքը մեզի խոստացիլ է:

Հց. Ի՞նչ կյուսամք Աստուծըմէ:

Պխ. Կյուսամք զյաւիտենական կեանքը, և զայն շնորքները, որոնցմով կըլլանք զյաւիտենական կեանքը գտնըվելու:

Հց. Ինչո՞վ կիբանեցվի այս յոյսը:

Պխ. Քրիստոնէական յոյսը մանաւանդ աղօթքով:

Հց. Ի՞նչի մէջ կիկաննի աղօթքը:

Պխ. Աղօթքը մեր մըտացը առ Աստուած վեր վերցընըլուն մէջ կիկաննի:

Հց. Պարտական եմք աղօթք անելու:

Պխ. Պարտական եմք զի աղօթքն է մեր հաւատուն գլխաւոր պարտաւորութեանցը մէջէն մէկ մը:

Հց. Ո՞ւմ անուամբն պարտական եմք աղօթք անելու:

Պխ. Յիսուսին անուամբն պարտինք աղօթք անելու:

Հց. Ի՞նչ կերպիւ պարտինք աղօթք անելու:

Պտ. Պարտինք աղօթք անելու խոնհեմութեամբ, և զղջալի սրտով, հոգւով, և արդարութեամբ՝ հաւատով, և յուսով։

Հց. Ո՞վ սովրեցուցիլ է զմեզ աղօթք անելու։

Պտ. Քրիստոս տէրն մեր սովրեցուցիլ է զմեզ աղօթք անելու։

Հց. Ի՞նչ աղօթք սովրեցուցիլ է զմեզ Քրիստոս Տէրն մեր։

Պտ. Օ. Հայր մերը։

## Գլուխ Գ.։

## Ի Վերայ Սիրոյ։

Հց. Ի՞նչ է Քրիստոնէական Սէրը։

Պտ. Քրիստոնէական Սէրն է Աստուծոյ պարգևը, որն որ կանէ որ սիրեմք զԱստուած ինչպէս զանհուն բարին, յատուկ իրեն համար. ու զընկերս վասն Աստուծոյ սիրուն ինչպէս մենք զմեզ։

Հց. Ո՞վ է մեր ընկերը։

Պտ. Ամէն մարդ. եղաւ նա բարեկամ, կամ թշնամի քրիստոնէ, կամ անօրէն, ծեր, կամ տղայ, խօճա, կամ աղքատ։

Հց. Ընկերսիրութիւնը ի՞նչ է։

Պտ. Է՝ աղէկ կամենալ ամէն մարդու. այսինքն նորա զայն անելու, ինչ որ իրեն սիրուն, և շահապետութեան է. նաև մէկ քովլի թողելու զայն ինչոր իրեն ատելի, և զենարան է։ Մէկ խօսօք ընկերօջս զայն անելու, ինչ որ պի կամենայի որ օշկանալ ինձի անէ։

Հց. Գլխաւորն է քրիստոնէական սէրը.

Պխ. Քրիստոնէական սէրը այնպէս գլխաւորն է ամէն մարդու, որ առանց սիրոյ անհնար է փրկուելու։

Հց. Որն է սիրոյ առաջին պատուիրանքը։

Պխ. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց։

Հց. Ո՞րն է սիրոյ երկուսում պատուիրանքն։

Պխ. Սիրեսցես զընկեր քո, իբրև զանձն քո։

Հց. Ի՞նչպէս թարգմանիլ է Քրիստոս զեղբայրսիրութեան պատուիրանքն։

Պխ. Զամենայն, զոր կամիք, որ արարեն ձեզ մարդիկ, և դուք արարէք նոցա. զի այս է, զոր օրէնս և մարգարէք ուսուցին։

Հց. Ո՞ւր կիգրուին սիրոյ ամէն պարտաւորութիւնները։

Պխ. Կիգրուին Աստուծոյ տասը պատուիրաններուն մէջ։

Հց. Պարտական ենք մենք զԱստուծոյ տասը պատուիրանները բռնելու։

Պխ. Պարտական ենք. զէրաւ՝ տասը պատուիրանքը է բնական օրինաց թարգմանութիւն։

Հց. Ունի՞ Մեր սուրբ Եկեղեցին իշխանութիւն պատուիրանք տալու։

Պխ. Ունի։

Հց. Պարտի՞նք զմեր սուրբ եկեղեցուն պատուիրանքները բռնելու։

Պխ. Պարտինք. զէրաւ՝ Քրիստոս ինքն մեր բաց կը-հրամայէ աւետարանին մէջ, որ մեր սուրբ Եկեղեցուն հնազանդինք։

## ՚Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ ։

Հ. Ի՞նչ է սուրբ Պատարագը ։

Պ. Սուրբ պատարագն է նոր օրինաց անարիւն խուրպան, ՚ի մշտնջենաւոր յիշատակ այն արիւնթաթախ խուրպանինը, զորն որ Քրիստոս տէրն մեր խաչին վրայ վերջ տուաւ ։

Հ. Ինչու համար սուրբ պատարագը անարիւն խուրպան կանուանուի ։

Պ. Անոր համար, զէրա՛ սուրբ Պատարագին մէջ արիւն չի վօթի ։

Հ. Ո՞վ կըմատուցանէ կաթօղըկէ մայր սուրբ Եկեղեցուն մէջ զսուրբ Պատարագը ։

Պ. Սուրբ Պատարագին մէջ աներեւելի կերպիւ Քրիստոս ինքն զինքն կըմատուցանէ Հօրն Աստուծոյ. երեւելի կերպիւ զայս պաշտօնը վերջ կըտանի քահանան ։

Հ. Ո՞ւմ կըմատուցանուի սուրբ Պատարագը ։

Պ. Սուրբ Պատարագը կըմատուցանուի միայն Աստուծոյ ։

Հ. Սակի՞ Պատարագ սրբոց պատուոյն ալ ։

Պ. Սակի. բայց այն ժամանակը քահանան զսուրբ Պատարագը չի մատուցանի սրբոցն, հաթէ Աստուծոյ ։

Հ. Ի՞նչպէս պարտ է զսուրբ Պատարագը լսելու ։

Պ. Զսուրբ պատարագը պարտ է լսելու լման, չի թողելով մէջէն ոչ մէկ նշանաւոր մաս մը ։ Նուական չէ որ մարդն միայն մարմնով ներկայ ըլլայ. հաթէ պիտոյ է որ. ա. մտադրաբար. բ. պարկեշտաբար. գ. ջերմեռանդաբար զայն լսէ ։

Հ. Որո՞նք են գլխաւոր մասերը սուրբ Պատարագին։
Պ. Սուրբ Պատարագին գլխաւոր մասերն են. Ա. ընծայումն. Բ. Աւետարանն. Գ. սրբագործութիւնն. Դ. վերացումն ամենասուրբ Հաղորդութեան մարմնոյ, և արեան տեառն 'ի մէջ Պատարագին. Ե. ճաշակումն։

### Գլուխ Դ.

### Ի վերայ սրբազան խորհրդոց։

Հ. Ի՞նչ է խորհուրդն։
Պ. Խորհուրդն է երեւելի նշան աներեւոյթ շնորհացն Աստուծոյ. զորն որ Քրիստոս տէրն մեր կարգադրեալ է վասն մեզ արդարացընելու։
Հ. Ումմէ՞ առել է ամէն խորհուրդ զիւր սկիզբն։
Պ. Ի Յիսուս Քրիստոսէ, ով որ է ամէն խորհրդոց սահմանող։

### Ի վերայ Մկրտութեան։

Հ. Ի՞նչ է մկրտութիւնը։
Պ. Մկրտութիւն է առաջին, և ըստ ալ պիտանական խորհուրդ. որով մարդը ջրով, և Աստուծոյ խօսքն, սկզբնական և ամէն ներգործական մեղքերուն, զորոնք մկրտութեան առաջ գործել էր կու-մաքրուի, և 'ի Յիսուս ինչպէս նոր ստեղծուած 'ի կեանս յաւիտենականս նորէնը կընծայի, և կու-սրբուի։
Հ. Քանի՞ կերպիւ կըլանք մկրտուելու։
Պ. Երեք. ջրով, արնով, և փափաքով։

Հց. Քանի՞ անգամ կրնանք մկրտուիլ.

Պտ. Անհնացու մեղաց տակ մէկ տարբեն ալ շատ չենք կրնայ մկրտուիլ։

Հց. Ո՞վ ունի իշխանութիւն մկրտելու։

Պտ. Քահանան, և 'ի վտանգի մահուան ամէն մարդ։

Հց. Ի՞նչ պէտք է որ ընէ այն մարդը, ով որ կու մկրտէ։

Պտ. Նա. ովոր կու մկրտէ

ա. Կամք ունենայ, թէ Քրիստոսի կարգադրութեանը գործ կու դնէ մկրտելու։

բ. Զմկրտուողը բնութեան, ու չէ փեշայով հաստատած ջրով թրջէ։

գ. Թրջելու ժամանակը զմկրտուողին անունը անուանելով, ասէ Ն. Ես զքեզ կու մկրտեմ Յանուն Հօր † և Որդւոյ † և Հոգւոյն † սրբոյ Ամէն։

## Ի վերայ Դրոշմին.

Հց. Ի՞նչ է դրոշմն։

Պտ. Դրոշմն է խորհուրդ, որն որ զմկրտուածը մեռոնովը, և Աստուծոյ խօսքին, 'ի Հոգին սուրբ կու ամրացնու, որ զհաւատը անշարժ պահանէ, և անոր գործ ապրի։

Հց. Ի՞նչ զօրութիւն ունի դրոշմն։

Պտ. Դրոշմն կու տայ ուժ, որ կարենայ մարդը յետ չարին նեղդուելու, անահ զօրեր հաւատը պահանելու, և հաւատոյն սիրուն չարչարուելու, և սիրով մեռնելու։

## Ի վերայ ամենասուրբ Հաղորդութեան:

Հց. Ի՞նչ է սուրբ Հաղորդութեանը խորհուրդը:

Պտ. Է՛ ճշմարիտ Մարմին, և Արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հացին, և գինուն նշխարքին տակը:

Հց. Ի՞նչ ատեն կըդառնայ հացը և գինին Քրիստոսի ճշմարիտ Մարմին և Արիւն:

Պտ. Երբոր քահանան սուրբ Պատարագին մէջ հացին վրայ զՔրիստոսի խօսքերը՝ Այս է մարմին իմ կասէ. և գինուն վրայ նոյնպէս զՔրիստոսի խօսքերը՝ Այս է արիւն իմ կասէ:

Հց. Ի՞նչ կերպիւ է Քրիստոսի Մարմինը, և Արիւնը հացին, և գինուն նշխարքնուն տակը:

Պտ. Ա. Հացին նշխարքին մէջ չէ միայն մարմինը Քրիստոսի, հաւթէ արիւնալ իւր հոգւովն, և Աստուածութենով ներկայ է:

Բ. Գինուն մէջ չէ միայն արիւնը, հաւթէ արիւնալ Քրիստոսի իւր հոգւովն, և Աստուածութենով ներկայ է: Հետևապէս՝

Գ. Թէ հացին, և թէ գինուն ամէն փոքր փայերուն մէջ բովանդակ Աստուած, և մարդ հոգւով և մարմնով և արընով կուգտուի:

Դ. Թէ հացին, և թէ գինուն նշխարքնուն մէջ Յիսուս Քրիստոս ողջ կուգտուի:

Հց. Ալէս հացին, ու գինուն էութիւնը ի՞նչ կուդառնայ:

Պտ. Քրիստոսի ճշմարիտ մարմին, ու արիւն:

Հց. Քանի՞ բան պէտք է որ մարդը արժանապէս հաղորդուի :

Պխ. Երեք. ա. Պէտք է որ մարդը ամէն մահացու մեղքէն խալաս ըլա : բ. Որ կէս գիշերվանէն ծոմ ըլա : գ. Որ պարկեշտ այսինքն հարկւոր հանդրձման ըլայ :

Հց. Մեծ մեղք է մահացու մեղաց մէջ գտնվելով հաղորդվելու :

Պխ. Մեծ, և մահացու մեղք է, որ մեղքը կանվանվի սրբապղծութիւն :

Հց. Ինչո՞ր է պարտը զուրբ հաղորդութիւնը ներս առնելու :

Պխ. ա. Ահով, դողով, և ջերմեռանդութիւնով :
բ. Օղջմամբ :
գ. Օտէր չեմ արժանին ասելով, զարնելով զկրծքերս :
դ. Օսուրբ հաղորդութիւնը չի ծամելով ոչ եկան բերնէրըս բռնելով, կամ մատօք անոր դպելով, հաթէ մէկումը զայն կուլ տալով :

Հց. Քանի՞ անգամ պարտական է քրիստոնէն հաղորդըվելու :

Պխ. Սուրբ Եկեղեցուն հրամանին գօրա, թէ որ աւ սերտ չէ, նա մէկ անգամ մը զատկին օրերուն պարտական է ամէն քրիստոնէ հաղորդվելու : Բայց զարտ զայս ժամանակը բարի քրիստոնէն աւ շատ անգամ տարին կուհաղորդվի : Անանւանդ պարտինք հաղորդվելու մեր վերջի սըհաթը, ու հի ինչ մահուան փորձանքի մէջ :

## Ի վերայ ապաշխարութեան։

Հց. Ի՞նչ է ապաշխարութիւնը։

Պտ. Ապաշխարութիւնն է խորհուրդ որին մէջը մեղաւոր մարդուն ամէն մեղքերը պօշ կարվին, թէ որ զանոնք մեղաւորը զղջալով ըման խոստովանի քահանուն։

Հց. Քանի՞ փայ ունի ապաշխարութեան խորհուրդը։

Պտ. Հինգ. ա. Նախ և առաջ պէտք է մարդը աղէկ փնտռէ զիրեն խղճմտանքը, թէ ինչ մեղքեր գործիլ է։

Ա. Զղջայ, ցաւի, ու փոշիմանի, որ զԱստուծոյ ամենաբարի սիրտը աղրիլ է, ու բարկացուցիլ է իւր մեղքովն։

Բ. Հաստատ նիաթ դնէ, այսուհետև զԱստուած մեղօք չի պի աղրէ։

Գ. Ըման խոստովանի քահանուն ամէն մեղքերը։

Դ. Զխոստովանահօրը դրած ապաշխարանքը կատարէ. թէ որ մարդու անըննի կամ ապրընքի զէն առած ըլլայ, նա ետ դարձընու։

Հց. Ինչ կերպիւ պէտք է որ մարդը քըւընտէ զիւր խղճմտանքը։

Պտ. Նախ և առաջ պէտք է որ խնդրէ զսուրբ Հոգւոյն շնորհքը, որ կարենայ թեթև զամէն մեղքերը շաղըշելու։

Ա. Շաղըշէ, թէ ինչ մեղքեր շաղըշով, խօսօք, և գործքով, կամ զանցառութեամբ գործիլ է, և այսպէս։

Բ. Տասը, կամ հինգ Պատուիրանքին, եղբայրսիրութեանը, կամ ինքիրէն ընդդէմ ինչ մեղանչիլ է։

Հց. Ապաշխարութեան խորհուրդին մէջ մեղաւորը կի-արձակվի՞ ամէն մեղքերուն ։

Պխ. Ամէն ցեղ մեղքերուն քանինչ մեծ ըլան անոնք, կիարձակվի մեղաւորը ապաշխարութեան խորհուրդին մէջ, թէ որ զայն ըման վերջ տանի նա ։

Հց. Ո՞վ ունի իշխանութիւն մեղքէն արձակելու ։

Պխ. Աստուած, և նորա փոխանորդաքը, ըման քահանայքը ։

Հց. Մ՞եծ մ՞եղք է ևքմը մահացու մեղք կամաւ չխոստովանելու ։

Պխ. Մահացու մեղք է, և սրբապղծութիւն ։

Հց. Ի՞նչ պէտք է որ անէ նա, ով որ խոստովանելով ամնչեցիլ է խոստովանելու, ու զայն պարտըկիլ է խոստովանութեանը մէջ ։

Պխ. Կամենալով ըման դարձ գալու այնպէս մեղաւորը, չէ միայն զպարտըկած մեղքը պարտի խոստովանելու, հա թէ՝

ա. Զայն խոստովանութիւնը որին մէջ այս խաբէութիւնը հանդըպիլ է նա նորացնելու ։

բ. Զամէն խոստովանութիւններ, զորոնք անոր ետև արիլ է նորացնելու, և ինքն զինքը տավի անելու քահանուն, թէ ամէն անգամ ըզմեղքը պարտըկելով նոր և նոր սրբապղծութիւն վերջ տարիլ է ։

գ. Թէ որ սուրբ Հաղորդութեանը, կամ այլ խորհուրդնու մասնակից եղիլ է, նա պարտական է զան ալ քահանուն յայտնելու, որովհետև որ ամէն անգամ զմեղքը չխոստովանելով նոր մահացու մեղք և սրբապղծութիւն գործիլ է ։



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ...
ՀՍՍՌ Арм.ССР
А. ...
39/3-57

Հց. Ի՞նչ է զղջումը:

Պտ. Զղջումը անէ, երբոր մարդը սրտանց կցավի կի-կսկծայ, կփոշմանի վասն իւր ամէն մեղացը, զամենաբարի Աստուած աղտրիլ է, և բարկացու-ցուցիլ է:

Հց. Ի՞նչ կերպիւ պարտ է զղջումը անելու:

Պտ. Այս կերպիւը. Տէր իմ, և Աստուած իմ ամենայն որպէս կցավիմ, կիկսկծամ, ու փոշիմանիմ, որ ասոնցմով, և կենացս բովանդակ մեղքովը զան-հուն և զամենակատար բարութիւնդ, աղտրիլ եմ, և բարկացուցիլ իմ:

Հց. Ի՞նչ է հաստատ նիաթը:

Պտ. Հաստատ նիաթը ան է, երբոր մարդը հաստատ նիաթ և խոստում կուդնէ թէ մեղքէն թարկը պիտայ:

Հց. Ի՞նչ կերպիւ կարվի այս խոստումը, կամ հաստատ նիաթը:

Պտ. Այս կերպիւը. Տէր իմ, և Աստուած իմ զքու սուրբ շնորհօքդ հաստատ նիաթ կիդնիմ, թէ այսուհետև զչար վարքս, պի փոխիմ, ու զքեզ ալ մեղօք չիպի աղտրիմ: Տուր ինձ Տէր իմ սի-րելի որդւոյդ Յիսուսի Քրիստոսի անգին և անչափ արժանաւորութիւնուն սիրուն զօրբարար շնորքըդ, որ կարնամ զխոստումս հաւատարմապէս կատարելու:

Հց. Ի՞նչ է խոստովանութիւնը:

Պտ. Խոստովանութիւնն է զղջալի դաւանել իւր ամէն մեղացը, այսինքն երբոր մարդը քահանուն ինքն զինքն տավի կանէ ամէն մեղքերուն վրայէն:

Հց. Ո՞րբ է խոստովանութիւնը խոնարհ, և հեզ:

Պտ. Երբոր մեղաւորը միտ բերելով զիւր տկար կա-ցութիւնը, շաղըշելով, թէ ով է նա, զով ինքն մեղքերով աղտրիլ է, և այսպէս չէ քիչ ամօ-թով զինքն քահանուն դիմաց տավլի կանէ զինքը, որ նարա մէ ինչպէս դատաւոր է դատավլի:

Հր. Երբ է լի կամ ընդրէկ խոստովանի:

Պտ. Խոստովանութիւնը լի է, երբոր մեղաւորը զամէն մեղք, ու այնպէս ընտոր զանոնք գործիլ է կի-խոստովանի:

Հր. Ինչ կերպիւ պէտք է որ խոստովանինք:

Պտ. Այս կերպիւը. նախ և առաջ մեղաւորը չոքի քահանուն դիմաց, և ինքն իրեն վրա խաչ հա-նելով ասէ՝

Ա. Օրհնեա տէր, որ զամէն մեղքերըս ըման, և զղջմամբ խոստովանիմ:

Բ. Ասէ զխոստովանիմը զայս ըմնցնելով:

Գ. Ասէ թէ իբր խոստովանիլ է ետքի տարպան:

Դ. Ու այսպէս կցէ զմեղքերը խոստովանելու այն կարգովը, որովն զանոնք շաղըշիլ է նա:

Ե. Լմնցնելով ինքն զինքն տավլի անելու, ասէ. Օ՛ասոնք, և զայլ շատ մեղքերս, զորոնք կամ մոռցիլ իմ, կամ չիմ գիտացի թէ մեղք են ամէնայն որպէս կիցաւիմ, ու կիկսկծամ որ զԱստուծոյ ողորմած, և ամենաբարի օիրտը աղ-տրիլ իմ, ու բարկացուցիլ իմ: Հաստատ նի-աթ կու դնիմ թէ ալ ալ մեղք չի պի գոր-ծիմ, և զամէն մեղաց պատճառները հեռա-ցընելու ճահլթ պի անիմ. զայս ըմնցնելով

Զ. Ասէ. Խնդրիմ Տէր տուր ինձ ապաշխարանք, և արձակումն:

Հրց. Ի՞նչ է ապաշխարանքը։

Պտխ. Է՛ ժամանակաւոր պատիժ, զորն որ քահանան կուգնէ մեղաւորին նորա մեղքերուն համար։ Եւ այս ապաշխարանք կամ աղօթք է, կամ ողորմութիւն է կամ պասեր և այլ ինչ ապաշխարանաց գործք։

Հրց. Ի՞նչ է Ներողութիւնը։

Պտխ. Ներողութիւնն է արձակումն այն ժամանակաւոր պատժունը, զորնոր մարդը դեռ մեղացը թողու-թեանը ետևանց ալ կամ աս ատենը կամ ան ա-տենը համբերելու պարտական պիլար։

Հրց. Ի՞նչ է լիակատար Ներողութիւնը։

Պտխ. Լիակատար Ներողութիւնն է ամէն ժամանակա-կաւոր պատժոց թողութիւն, զորմք պարտական պի լար մեղաւորը համբերելու։

Հրց. Ի՞նչ է ժամանակաւոր Ներողութիւնը։

Պտխ. Ժամանակաւոր Ներողութիւնը է թողութիւն ժամանակաւոր պատիժներուն մէկ փայի մը զորօրի-նակ մէկ քանի աւուր, կամ մէկ քանի տարին ա-պաշխարանքի Ներողութիւն։

## ՚Ի վերայ վերջին օծման։

Հրց. Ի՞նչ է վերջին օծումն։

Պտխ. Է՛ խորհուրդ, զորն որ Քրիստոս սահմանել է հիւանդացը ոգւոյն վրայ։

Հրց. Ո՞ւմ պէտք է զվերջին օծումն տալու։

Պտխ. Փորձանքաւոր հիւանդաց, բայց ալ շահովէ, թէ որ այն ատենը տրվի, երբոր հիւանդը իրեն զինքն գիտէ։

Հրց. Ի՞նչ շահ կուգայ վերջին օծմանէն։

Պտ. Վերջի օծումն ա. զօրաւոր շնորհքը հիւանդին մէջ կաւելցնէ։

բ. Կը շնորհէ թողութիւն ամէն ներելի, և այնպէս մեղաց, զորոնք հիւանդը կամ՝ չի գիտցի թէ մեղք են, կամ՝ մոցիլ է խոստովանելու, կամ՝ կարողութիւն չի ունեցի խոստովանելու։

գ. Կուտայ ուժ հիւանդին ընդդէմ սատանային փորձութեանցը։

դ. Կուպարգևէ հիւանդին շնորհք, որ իրեն ցաւերուն համբերէ սիրով, ու զմահն ալ ընդունէ, թէ որ Աստուծոյ կամքը ըլլայ նէ։

ե. Թէ որ հոգւոյ փրկութեան ըլլայ հիւանդին, նա զմարմնոյ առողջութիւնն ալ կիբերէ։

Հր. Ինչ կերպիւ պէտք է, որ մարդը հաորըվի զվերջի օծումն առնելու։

Պտ. ա. Ողջ հաւատով, և հաստատ յուսով ինքն զինքն Աստուծոյ յանձնելով։

բ. Խոստովանութեամբ, և թէ որ անհնար ըլլար, նա զղջմամբ պէտք է զայս սուրբ խորհուրդը վեր առնելու։

Հր. Քանի՞ անգամ կըլլայ հիւանդը զվերջի օծումն վեր առնելու։

Պտ. Ինչխա անգամ մարդը փորձանքաւոր հիւանդ ըլլայ, բայց մէկ հիւանդութեան մէջ միայն մէն անգամ մի կըլլայ զվերջի օծումն վեր առնելու։

## Գլուխ Ը։

### Ի վերայ Քրիստոնէական արդարութեան։

Հ. Ի՞նչ է Քրիստոնէական արդարութիւնը։

Պ. Քրիստոնէական արդարութիւնը է փախչելու չարէն, ու զբարին գործելու։

Հ. Ի՞նչ է չարը։

Պ. Ճշմարիտ չարը է միայն մեղքը։

Հ. Ի՞նչ է մեղքը։

Պ. Մեղքն է Աստուծոյ պատուիրանաց կամաւ ոտից տակ առնելը։

Հ. Քանի՞ ցեղ մեղք կայ։

Պ. Երկուս. սկզբնական և ներգործական մեղք։

Հ. Ի՞նչ է սկզբնական մեղքը։

Պ. Սկզբնական մեղքը է, զորնոր Ադամ՝ ՚ի դրախտին, ու մենք ՚ի մէջ Ադամայ գործիլ ենք, զորնոր իրմէն ինչպէս յատուկ որդիք, ու դատրվիք կուժառանգինք։

Հ. Ի՞նչ է ներգործական մեղքը։

Պ. Ներգործական մեղքն է, զորն որ մեղաւորը կամօք կանէ. ոտից տակ առնելով զԱստուծոյ պատուիրանքը։

Հ. Քանի՞ կերպիւ կարվի ներգործական մեղքը։

Պ. Չորս կերպիւ, ա. Ըղձով. բ. Խօսքով. գ. Գործքով. դ. Զանցելով զայն, ինչ որ անելու պարտական է մարդը։

Հ. Ի՞նչ զանազանութիւն կայ ներգործական մեղքերուն մէջ։

Պտս. Ներգործական մեղքերուն զանազանութիւնը այն է, որ ոմանք ծանր, այսինքն մահացու մեղքեր են. ոմանք թեթեւ, այսինքն ներելի։

Հրց. Ի՞նչ է մահացու մեղքը։

Պտս. Մահացու մեղքն է, Աստուծոյ պատուիրանաց ծանր բաներու մէջ ոտից տակ առնելը։

Հրց. Ի՞նչ զէն կուբերէ մահացու մեղքը։

Պտս. Մահացու մեղքը կըզրկէ զմարդը Աստուծոյ շնորհքէն, կանէ զմարդը Աստուծոյ թշնամի, և յաւիտենական դատապարտութեան արժանի։

Հրց. Ի՞նչ է ներելի մեղքը։

Պտս. Է՛ Աստուծոյ հրամանին թեթեւ բանի մէջ կոխելը։

Հրց. Որո՞նք են ներգործական մեղքերուն զանազան ազ-երը։

Պտս. Ասոնք են ա. Օխտը գլխաւոր մեղք. բ. Վեց ընդդէմ Հոգւոյն սրբոյ մեղք. գ. Չորս երկինքը կանչող մեղք՝ դ. Ինը օտար մեղք։

Հրց. Որո՞նք են Օխտը գլխաւոր մեղքերը։

Պտս. Օխտը գլխաւոր մեղքերը ասոնք են. ա. Հպարտութիւն. բ. Ագահութիւն. գ. Չար ցանկութիւն. դ. Նախանձութիւն. ե. Ուտելու և խմելու մէջ անկարգութիւն. զ. Բարկութիւն. է. Ծուլութիւն։

Հրց. Որո՞նք են Հոգւոյն սրբոյ ընդդէմ մեղքերը։

Պտս. Ասոնք են. ա. Աստուծոյ ողորմութեանը մէջ կուր և անկարգ յուսալու. բ. Աստուծոյ ողորմութեանը վրայէն զյոյսը վեր առնելու. այսինքն յուսահատելու. գ. Ճանչցած քրիստոնէական ճշմարտութեանը ընդդէմ կանգնելու. դ. Ընկերոջ

հոգւոր աղէկին համար մըշխուլվելու. Ե. Բարի խրատներուն ընդդէմ, չարութեանը մէջ քարա-նալու. Զ. Ապաշխարութեան մէջ չարապէս մնալու։

Հց. Որո՞նք են երկինքը կանչող մեղքերը։

Պտ. Ա. Կամաւոր մարդասպանութիւնը. Բ. սոդոմա-կան մեղք. Գ. աղքատաց, որբոց, և որբևայրոց անդադար ղըկումը. Դ. Ծառայից վարձքերնուն, նաև բանւորդաց հախին քաշելը, չի վճարելը։

Հց. Որո՞նք են օտար մեղքերը.

Պտ. Ա. Օգնան, որ մեղք անէ, խրատ տալու։
Բ. Օգնային, մեղք անէ, հրամայելու։
Գ. Օգնային մեղացը հաւանութիւն տալու։
Դ. Օգնան մեղքի մօտ բըրընձնելու։
Ե. Օգնային մեղքը գովելու։
Զ. Օգնային մեղքը չի պատժելու։
Է. Օգնային մեղքը դուրս չի տալու։
Ը. Օգնային մեղացը մասնակից ըլլալու։
Թ. Օգնային մեղքը պահպանելու։

Հց. Ի՞նչ է բարին։

Պտ. Բարին ան է, որն որ է Աստուծոյ պատուիրա-նացը գօրա։

Հց. Ի՞նչ է Աստուծոյ պատուիրանացը գօրա։

Պտ. Աստուծոյ պատուիրանացը գօրա են առաքինու-թիւնները. ու բարի գործքերը։

Հց. Քանի՞ ցեղ են առաքինութիւնները։

Պտ. Շատ ցեղ են. բայց ալ օգտակար երկուսին. Աստուածաբանական, ու բարոյական։

Հց. Որո՞նք են Աստուածաբանական առաքինութիւն-ները։

Պտ. Իրեք. հաւատ. յոյս. և սէր:

Հց. Ե՞րբ պարտի մարդը ալ իժով բանեցընելու զայս Աստուածաբանական առաքինութիւնները:

Պտ. Մեղաց տակ պարտի մարդը զայս առաքինութիւնները բանեցնելու. ա. երբոր խելահաս կը դառնայ. բ. սերտ իրեն կենացը մէջ, մանաւանդ խոստովանութեան, և հաղորդվելու ժամանակը. գ. երբոր ընդդէմ այս առաքինութեանց փորձութիւն կուգայ մարդուն. դ. երբոր մահու փորձանքի մէջ է:

Հց. Ի՞նչ կերպիւ կըլայ մարդը զհաւատը բանեցընելու:

Պտ. Զհաւատը մարդը կըլայ բանեցնելու այսպէս:

Հաստատապէս ես կուհաւատամ, ինչ ալ որ ինձի կաթողիկէ Հռովմէական Մայր սուրբ Եկեղեցին հաւատալու կըդնէ. զասոնք իսդով անոր համար կուհաւատամ տէր իմ, և Աստուած իմ զէրամ դուն անսխալ ճշմարտութիւն ըլլալով յայտնիլ ես: Ու յատկապէս կուհաւատամ թէ կայ մէկ Աստուած մը, ու իրեք զանազան աստուածային անձը, այսինքն Հայր, Որդի, և Հոգին սուրբ. կուհաւատամ թէ Աստուծոյ որդին Հոգւոյն սրբոյ զօրութեամբը Մարիամայ Կուսին յորովայնէն մարմին առիլ է, մարդացիլ է, չարչարվիլ է, և խաչին վրայ մեր համար մեռիլ է, երեքում օրը 'ի մեռելոց յարիլ է, ու յերկինքը համբարձիլ է, անկի աշխարքիս վերջի պիտայ դատելու զամէնքը, որ բարի քրիստոնէիցը տայ զյաւիտենական կեանքը, և զանդարձ մեղաւորաքը պատժէ յաւիտենական դժոխային պատիժներովը:

Այս հաւատուն մէջ ապրելու, և մեռնելու ճշմարտապէս հաստատիլ իմ։

Հց. Ի՞նչ կերպիւ պէտք է զյոյսը բանեցնելու։

Պտ. Այս կերպիւ՝ Ով տէր իմ, և Աստուած իմ որովհետև դուն ամենակարող, և անհունապէս ողորմած ես, Յիսուսին վարձքերուն համար կը յուսամ զմեղաց թողութիւնը, աստէնը զշնորհքը, ու անտէնը զյաւիտենական փառքը, ինչպէս որ դուն հաւատարիմ ըլլալով խոստացիլ ես, թէ որ զբարին գործիմ, նիաթ կիդնիմ հիմպիկ, թէ զբարին գործելու ճգնութեամբ, ճահդ պի անիմ։

Հց. Ի՞նչ կերպիւ պէտք է զսէր բանեցընելու։

Պտ. Այս կերպիւը. Ով տէր իմ, և Աստուած իմ, որովհետև դուն ես անհուն, և ամենակատար բարութիւնը, զքեզ աւելի, քան զամէն բանը յամենայն սրտէս կուսիրիմ, և քո սիրուն համար կիսիրիմ, ու սիրելու չի պի դադարիմ զօղկաներնալ, ինչպէս յատուկ զիս։ Ով տէր իմ, և Աստուած իմ որովհետև աւելի քան զամէնը կիսիրիմ զանհուն և զամենակատար բարութիւն, ամենայն սրտէս կուցավլիմ, որ պատուիրանացդ դէմ ժաժելով զքեզ ազտրիլ եմ, հաստատապէս շնորհքդ կուխոստանամ, թէ այսուհետև զքեզ չիպի ազտրիմ, և ամենայն մօտիկլի մեղաց պատճառներուն օգնականութեամբդ հեռանելու ճահթ պի անիմ։ Տուր տէր զշնորհքդ, որ կարնամ զխոստումս կատարելու։

Հց. Ո՞րոնք են գլխաւոր բարեգործութիւնները։

Պտ. Գլխաւոր բարեգործութիւններն են, աղօթքը, պասը, և ողորմութիւն տալը

Հարց. Որո՞նք են մարմնաւոր ողորմութեան գործքերը։

Պատ. Ասոնք են. ա. Զքաղցածը կերակրելու. բ. Զծարաւը խմցընելու. գ. Զմերկիկը հագցընելու. դ. Ճամբորդացը խօնախ տալու. ե. Զհիւանդ այց առնելու. զ. Զգերին ազատելու. է. Զմեռածը թաղելու.

Հարց. Որո՞նք են հոգևոր ողորմութեան գործքերը։

Պատ. Օխտն են ա. Զմեղաւորը գէշ բռնելու. բ. Զտգէտը խրատելու. գ. Երկումտին աղէկ խրատ տալու. դ. Զմըշխուլը մխիթարելու. ե. Գէշ անողին սիրով համբերելու. զ. Զքեզ աղտողին պօշ անելու. է. Կենդանեաց, և մեռելոց համար զԱստուած խնդրելու։

Հարց. Որո՞նք են Աւետարանական խրատները։

Պատ. Իրեք են. ա. Կամաւոր աղքատութիւն. բ. Աշտնչենաւոր մաքրութիւն. գ. Կատարեալ հնազանդութիւն ՚ի մէջ կրօնի իւր մեծաւորաց։

## Աւելցուցած փայ ։

### Ի վերայ չորս ետին բաներու ։

Հց. Որո՞նք են չորս ետի բաները ։

Պխ. Ասոնք են. Մահ. Դատաստան. Դժոխք և Արքայութիւն ։

Հց. Ի՞նչ է մահը ։

Պխ. Մահն է բաժնըվելը հոգուն իւր մարմնէն ։

Հց. Պէ՞տք է որ ամէն մարդ մեռնի ։

Պխ. Պէտք է որ ամէն մարդ մեռնի ան մեղքին համար, զորնոր Ադամ դրախտին մէջ, և մենք 'ի Ադամ գործիլ ենք ։

Հց. Ի՞նչ պէտք է գիտնալու դատաստանին կողմանէն ։

Պխ. Զայն, թէ Քրիստոս զամէն մարդու հոգի մէկումը մահուանը ետևանց կիդատէ, ու այս դատաստանը կասվի մասնաւոր դատաստան ։ Ու վերջի օրը զամէն մարդ հոգւով, և մարմնով մէկ տեղ պի դատէ, ու այս կասվի վերջի դատաստան ։

Հց. Ի՞նչ է դժոխքը ։

Պխ. Դժոխքն է մէկ նըյնպէս տեղմը, որուն դատապարտեալքը յաւիտեան կըտանջըվին ։

Հց. Ի՞նչ պատիժներ են դժոխքին պատիժները ։

Պխ. Զամէն ցեղ գէշ պատիժներէն կիանցնու այն պատիժը, որ դատապարտըվածները ոչ մէկ յոյս մը չեն կարնայ ունենալու, թէ զԱստուած պիտեսնուն ։

Հց. Որո՞նք կերթան դժոխքը ։

Պխ. Նոքա, որոնք մահացու մեղաց մէջ կի մեռնին ։

Հց. Վերջի դատաստանին ետեւանց պի կենա՞յ քաւարան։

Պխ. Չի պի կենայ, զիրամ քաւարանը մաքրութեան տեղիէ։

Հց. Ո՞վ կերթայ քաւարանը։

Պխ. Նա, ով որ ներելի մեղաց մէջ կումեռնի, կամ մեղացը համար ապաշխարանք չի բռնի աստենը։

Հց. Ի՞նչ է արքայութիւնը։

Պխ. Արքայութիւնը է այն երանի տեղի, ուրուխ Աստուած ինքն զինքն կուցրցնու երեսէ երես սրբերուն, ինչպէս իրեն սիրելի ծառայիցը, պաշխելով իրենց ինչպէս անդին վարձք յատուկ ինքն զինքն։

Հց. Ո՞րոնք են արժանի արքայութեան։

Պխ. Նաքա, որոնք Աստուծոյ շնորհացը մէջ կմեռնին, և իրենց մեղքերուն համար կամ անտէնը, կամ աստէնը ուժեմ քաշիլէն զհարկաւոր ապաշխարանքը կամ պատիժը։

Վ Ե Ր Ջ

# Ի ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄՈՒ

Քարոզ Աղաչական ի ձեռն քահանային:

Ղէ Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկու-
Եէ թեան անձանց մերոց. զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ զՏէր աղ:

Վասն քաւիչ և ներօղ լինելոյ Աստուծոյ ՚ի վերայ մեղաց մերոց. զՏէր աղա:

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ. զՏէր աղա:

Վասն զի մի ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան. զՏէր:

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի Քրիստոս ննջեցին. զՏէր:

Եւ ևս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ. զՏէր:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Քարոզ Երկինք պատմեն, և Տէր ապաւէն կանոնայն:

այ Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան և յամենայն
գյ ժամու խօսիլ մեզ զբան Տեառն. զՏէր:
Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել. զՏէր:
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի. զՏէր:
Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից. զՏէր:
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն, և երկնից արքայութեան. զՏէր:
Վասն հոգւոցն: Եւ ևս և վասն միաբա: Զանձինս մեր: Ողորմեա՛ց

Քարոզ Մի նախանձիր, և Խոստովան կանոնայն:

ակ Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանապարհս խա-
գկ ղաղութեան. զՏէր աղ:
Վասն ցրելոյ 'ի մէնջ զամենայն խորհուրդս չարին. զՏէր աղաչես:
Վասն պարգևելոյ մեզ առողջ խոհուրդս և առաքինի վարս. զՏէր.
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ. զՏէր:
Վասն խորտակելոյ զհակառակորդն փաղփաղակի ընդ ոտիւք մերովք. զՏէր:
Վասն հոգւոցն: Եւ ևս և վասն միա: Զանձինս: Ողորմեա՛ց:

Վարող Ողորմեա. Ե 'Ի Նեղութեան կանոնացն,

Եյ Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի
Դյ բարերար Տեառնէ մերմէ. զՏէր աղա։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութենէ մարդկան, և յորոգայթից սատանայի. զՏէր աղա։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց. զՏէր։

Վասն որք 'ի լերինս՝ յայրս՝ և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր. զՏէր աղա։

Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց. զՏէր։

Վասն հոգւոցն։ Նաւ ևս և վասն միա։ Զանձինս։ Ողորմեա՛ց։

# ՅԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄՈՒ։

ԼՑԱՔ ԱՌԱՒՕՏՈՒ ՈՂՈՐՄՈՒթեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն յորս տեսաք զչարչարանս։

Հայեաց Տէր 'ի ծառայս քո. և 'ի գործս ձեռաց քոց. և առաջնորդեա՛ որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Աստուծոյ 'ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ Տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

փառք Հօր, և Որդ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնութիւն, և փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. այժմ և.

## Օրհնութիւն Երից Մանկանցն Դանիէլի։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու Տէր. և ամենայն գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են. և ամենայն դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութեան ածեր ՚ի վերայ մեր ըստ ամենայնի. և զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր և քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի։

Արդարութեամբ և իրաւի ածեր զայս ամենայն ՚ի վերայ մեր վասն մեղաց մերոց։

Անօրինեցաք և յանցեաք ապստամբ լինել ՚ի քէն. մեղաք յամենայնի. և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս պատուիրեցեր դու մեզ. զի բարիս գտցուք մեք ՚ի քէն։

Արդ զամենայն զոր արարեր. և զոր ինչ ածեր ՚ի վերայ մեր. արդար դատաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց՝ և ապստամբողաց։

՚Ի ձեռս թագաւորի անօրինի, և չարի քան զամենայն երկիր մատնեցեր զմեզ։

Եւ արդ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր,
զի յամօթ և նախատինք եղաք ծառայից քոց,
և պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո.
մի՛ ցրեր զուխտ քո. և մի՛ ՚ի բացեայ առներ
զողորմութիւնս քո ՚ի մէնջ։

Վասն Աբրահամու սիրելւոյ քո, Իսահակայ ծա-
ռայի քո. և Իսրայելի սրբոյ քո։

Խոստացար նոցա և ասացեր, բազմացուցից զզ-
աւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմու-
թեամբ. և որպէս զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ Տէր նուաղեցաք մեք քան զամենայն
ազգս. և եմք տառապեալք յամենայն երկրի
այսօր վասն մեղաց մերոց։

Ոչ գոյ ՚ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգա-
րէ, և առաջնորդ, ոչ ողջակէզք պատարա-
գաց, և ոչ խունկք օրհնաց, և ոչ տեղի պա-
տարագս մատուցանելոյ առաջի քո և զողորմու-
թիւն գտանել ՚ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ. և հոգւով տառա-
պանաց ընդունելի լիցուք մեք որպէս զողջա-
կէզս խոյոց և զուարակաց. և որպէս բիւրաւորս
գառանց պարարտաց։

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր
առաջի քո, զի կատարեալ գտցուք զկնի քո, և
չիք ամօթ յուսացելոցս ՚ի քեզ։

Եւ արդ գամք զհետ քո ամենայն սրտիւք մե-
րովք. երկնչիմք ՚ի քէն. և խնդրեմք զերեսս
քո Տէր. մի՛ յամօթ առներ զմեզ։

Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութեան քում և

ըստ բազում ողորմութեան փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց Տէր, և փառաւորեսցի անուն քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան, որք չարչարեն զծառայս քո. ամաչեսցեն լիցին բռնութիւնք նոցա, և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեսցին:

Եւ ծանիցեն, զի դու ես Տէր Աստուած միայն՝ որ փառաւորեալդ ես 'ի վերայ ամենայն տիեզերաց:

Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ և առ:

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո, գով:

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո. գով:

Օրհնեալ ես՛ որ նստիս 'ի քրովբէս. և հայիս յանդունդս. գով:

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից գով:

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր. օրհնեցէք, և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զՏէր օրհնե:

Օրհնեցէք հրեշտակք Տեառն, և ջուրք՝ որ 'ի վերայ երկնից զՏէր. օրհնե:

Օրհնեցէք զօրութիւնք Տեառն՝ արեգակն և լուսին զՏէր. օրհնե:

Օրհնեցէք աստեղք երկնից՝ անձրևք և ցօղք զՏէր օրհնե:

Օրհնեցէք ամենայն հողմք՝ հուր և ջեր զՏէր · օրհ ։

Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաբեր զՏէր · օրհ ։

Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն և ձիւն զՏէր · օրհ ։

Օրհնեցէք տիւք և գիշերք, լոյս և խաւար զՏէր · օրհ ։

Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր զՏէր · օրհ ·

Օրհնեցէք լերինք, բլուրք, և ամենայն բոյսք երկրի զՏէր · օրհ ։

Օրհնեցէք աղբիւրք, ծովք, և գետք զՏէր · օրհ ։

Օրհնեցէք կէտք և ամենայն կայտառք, որք 'ի ջուրս, և թռչունք երկնից զՏէր · օրհ ։

Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏէր · օրհ ։

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր · օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան ։

Օրհնեցէք քահանայք զՏէր · օրհ ։

Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր · օրհ ։

Օրհնեցէք անձինք և շունչք արդարոց զՏէր · օրհ ։

Օրհնեցէք սուրբք և խոնարհ սրտիւք զՏէր · օրհ ։

Օրհնեցէք Անանիա, Ազարիա, և Միսայէլ զՏէր · օրհ ։

Փառք Հօր ։ Այժմ և միշտ ։

Խղ Օրհնեցէք զարարիչն արարածոց · զտէրն տէրանց, զթագաւորն թագաւորաց զԱստուածն աստուածոց ։

Օրհնեցէք գովեցէք, բարեբանեցէք, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

## Քարոզ զկնի հարցէն:

Եկեալքս ամենեքեան 'ի սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին Որդին Աստուծոյ զՏէրն մեր և զփրկիչն Յիսուս Քրիստոս:

Որ էջ փառօք Հօր 'ի մէջ հնոցին. և փրկեաց զերիս մանկունսն 'ի Քաղդէացւոց անտի: Լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր. զի մի՛ երբէք խաբիցուք մեք 'ի մեղաց, և 'ի ցանկութենէ աշխարհի: Այլ արժանի եղիցուք պահել զպատուիրանս նորա. առնուլ զպսակն լուսոյ և կենաց 'ի յանձինս մեր: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր, կեցո՛ և ողորմեա՛.

## Երգ Մարիամու Աստուածածնին:

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանիցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն և սուրբ է անուն նորա:

Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զզօրութիւն բազկաւ իւրով.

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ելից բարութեամբ. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր. ընդ Աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան։

## Օրհնութիւն Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչին։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ յայց ել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան 'ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանովք սրբոցն. որք յաւիտենից մարգարէքն էին։

փրկութիւն 'ի թշնամեաց մերոց և 'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։

Առնել ողորմութիւն առ հարսն մեր. և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ։

Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ. տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա։

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ 'ի թողութիւն ամենայն մեղաց մերոց։

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մե-րոյ. որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց՝ լուսաւոր առնել զխաւար մեր:

Օգնել զմեզ 'ի վերայ այսոցիկ՝ որք նստէաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան:

### Աղօթք Ծերունւոյն Սիմէոնի:

Արդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո. զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողո-վրդոց: Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում Իսրայէլի:

Փառք Հօր, և Որդ.

### Քարոզ ընդ ընծայութեանն:

Սուրբ զԱստուածածինն՝ և զամենայն սուրբս բա-րեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս, զի կա-մեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարա-րածս իւր. ամենակալ Տէր:

### Քարոզ ընդ ընծայութեանն կերակրոց տուողաց:

Վասն սուրբ տեղւոյս շինութեան, և բարեկար-գութեան. զՏէր աղաչեսցուք:

Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ. զՏէր աղ:

Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում. զՏէր :

Եւ ևս և վասն միա : Զանձինս : Ողոր :

## Քարոզ զկնի երանելեաց աւետարանին և երգոյն :

Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ աւետեօք յարութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի : Որ եղև պտուղ և անդրանիկ ամենայն ննջեցելոց : Խորտակեաց զդրունս դժոխոց . և եղիծ զզօրութիւն մահու : Եւ ետ յոյս հաստատութեան՝ վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան : Խնդրեսցուք հաւատով 'ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ : Զի զմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ : Կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց : Վասնզի զայս խոստացաւ՝ զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր . կեցո և ողոր :

### Սաղմոս :

Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ :

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ . և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս :

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ . և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ :

Քեզ միայն մեղայ Տէր․ և զչար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո․ և յաղթեսցես 'ի դատելն քո։

Անօրէնութեամբ յղացայ․ և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր․ զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ, և սուրբ եղէց․ լուա՛, և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն և զուրախութիւն․ և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց․ և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Զսիրտ սուրբ հաստեա՛ յիս Աստուած․ և զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց․ և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկութեան․ և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո․ և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած․ Աստուած փրկութեան իմոյ․ և ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք․ բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ՝ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ:
Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղեմի:
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր. այժմ և:

## Քարոզ վերջին ողորմութեան:

Երկրպագեմք քեզ Տէր Աստուած մեր անցեալքս ընդ երկարութիւն գիշերիս՝ և կանխեալքս ՚ի տեղւոջ՝ խոստովանութեան մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր: Զքեզ Տէր օրհնեմք և փառաւորեմք. և զքէն Տէր գոհանամք. որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել և հասանել ՚ի ժամ առաւօտուս: Արժանաւորեա զմեզ Տէր անձառ խոստմանց քոց, զոր խոստացար սիրելեաց քոց՝ ճշմարիտ Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր, կեցո և ողորմեա: Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. աստացուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմ. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Ալէլուիա. ալէլուիա:

Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնեցէք զնա ՚ի բարձունս:
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա:

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս:

Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք՝ որ 'ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանուն Տեառն:

Զի նա ասաց, և եղեն. հրամայեաց, և հաստատեցան:

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ոչ անցանէին:

Օրհնեցէք զՏէր յերկրէ վիշապք, և ամենայն խորք:

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկ որք առնէք զբան նորա:

Լերինք և ամենայն բարձունք՝ ծառք պտղաբերք և ամենայն մայրք:

Գազանք և ամենայն անասունք՝ սողունք և ամենայն թռչունք թեւաւորք:

Թագաւորք երկրի, և զօրք իւրեանց. իշխանք՝ և ամենայն դատաւորք երկրի:

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք օրհնեցէք զանուն տեառն:

Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի:

Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ, օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա յորդւոցն Իսրայէլի, ժողովրդեան՝ որ մերձ է առ Տէր:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիօնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց:

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ. սաղմոսիւք և օրհնութեամբ սաղմոս ասասցեն նմա:

Հաճի Տէր ընդ ժողովուրդս իւր սուրբ. և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան:

Պարծեսցին սուրբքն փառօք. և ցնծասցեն ՚ի հանգիստս իւրեանց. և բարձր արասցեն զԱստուած բերանօք իւրեանց:

Սուր երկսայրի ետ ՚ի ձեռս նոցա. առնուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց, յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց:

Կապել զթագաւորս նոցա կապանօք, և զփառաւորս նոցա ձեռնակապօք երկաթեօք:

Առնել նոցա դատաստան ըստ գրոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա:

Օրհնեցէք զԱստուած ՚ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նորա. օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութեան նորա:

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ. գովեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր. գովեցէք զնա ՚ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութեան. ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

## Քարոզ կիրակամտից, կիւրակէից, և տօնից:

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ. Տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. զՏէր աղաչեսցուք:

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց. զՏէր աղաչ:

Վասն սրբազան Պապին մերոյ Տեառն այս անուն, կենաց և փրկութեան հոգւոյ նորին. զՏէր աղա:

Վասն հայրապետին մերոյ Տեառն այս անուն, կենաց և փրկութեան հոգւոյ նորին. զՏէր աղա:

Վասն վարդապետաց քահանայից. սարկաւագաց, դպրաց. և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ. զՏէր աղա:

Վասն բարեպաշտ թագաւորաց՝ և աստուածասէր իշխանաց՝ զօրավարաց՝ և զօրաց նոցին. զՏէր աղա:

Վասն զի Տէրն ամենակալ հնազանդեցուսցէ առաջի նոցա զամենայն պատերազմունս թշնամեաց. զՏէր աղա:

Յաղագս հարց և եղբարց մերոց՝ որք 'ի գերութեան են, և 'ի չար ծառայութեան. զՏէր աղա:

Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝ խաղաղութեամբ հասանել 'ի նաւահանգիստն բարութեան. զՏէր աղա:

Յաղագս հիւանդաց, և ամենայն վշտացելոց փութապէս առողջութեան. զՏէր աղա:

Յաղագս բարեխառնութեան օդոց՝ անձրևաց քաղցրութեան և պտղոց առատութեան. զՏէր աղա:

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից՝ 'ի սուրբ եկեղեցի Աստուծոյ. զՏէր աղա.

Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալ են 'ի ձեռս անօրինաց վասն անուանն Քրիստոսի. զՏէր աղա.

Յաղագս հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի Քրիստոս ննջեցին. զՏէր աղա:

Յաղագս փրկելոյ զմեզ Տեառն Աստուծոյ յերևելի, և յաներևոյթ թշնամւոյն. զՏէր աղա.

Սուրբ զՄարիամ զաստուածածինն, զփառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն. սուրբ զՅովհաննէս մկրտիչն. սուրբ զՍտեփանոս նախավկայն. սուրբ զառաքեալսն, և զմարգարէսն. զարի և զյաղթօղ սուրբ զվկայսն. և զսուրբ խոստովանողն Քրիստոսի զհայրապետն մեր զսուրբն Գրիգորիս լուսաւորիչն Հայաստանեայց աշխարհի:

Յիշեսջիք և զամենայն սուրբս, և նոքօք զՏէր աղա:

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութեան պահապան:

Զքաւութիւն և զթողութիւն յանցաց:

Զսրբոյ խաչին մեծ և կարօղ զօր:

Եւ ես և վասն միաբանութեան ճշմարիտ:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ:

### Քարոզ պահոյ:

Փառաւորեսցուք զամենակալն Աստուած զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ գոհանալով զնմանէ, որ պահեաց զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ. և առաջնորդեաց մեզ 'ի խաւարէ 'ի լոյս, 'ի մահուանէ 'ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ 'ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ: Աղաչեսցուք 'ի նմանէ. զի զերկարութիւն տունջեանս խաղաղութեամբ, և ամենայն մտադիւր զուարթութեամբ արասցէ անցուցանել 'ի մէնջ: Եւ պարսպեալ պահեսցէ զժողովուրդս իւր աստուածային զօրութեամբն, որ 'ի վերայ ամենայնի բարեբարութեամբն իւրով իշխանութիւն ունի: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո́ և ողորմեա́:

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի տեառնէ խնդր:

Զհրեշտակ խաղաղ: Զքաւութիւն:

Զսրբոյ խաչին: Եւ ես և վասն միաբա:

Զանձինս մեր: Ողորմեաց մեզ:

### Քարոզ իջնէ սուրբ տապանակէն:

Եւ ես խաղաղութեան զՏէր աղա:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին. և իջանելոյ 'ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ տէր Աստուած մեր կեցո́ և ողո:

Բարբառ կերպարանեց, և այլոց դերբարանական դանից ։

Անդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի ։

Կեցո Տէր. Տէր ողոր ։

Իսկ յայլ աւուրս յետ Սուրբ Աստուածածին, և ժամերգին, ասէ սաղմոս 'ի ՃԺԲ ։

Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէ ք զանուն Տեառն ։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան ։

Յարևելից մինչև 'ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն Տեառն ։

Բարձր է 'ի վերայ ամենայն ազգաց Տէր. և յերկինս են փառք նորա ։

Ով է որպէս Տէր Աստուած մեր 'ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի ։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբևաց ։

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ ։

Բնակեցուցանէ զամուլն 'ի տան՝ ուրախամիտ որպէս մայր որդւովք բերկրեալ ։

Փառք Հօր, և Որդւոյ ։

'Քարոզ վերջին ձայնակցին :

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք ։ Աստուած ամենեքեան միաբանութեամբ :

Տէր ողորմեա՛ : Երիցս :

'Ի փոխ սրբոյ սաղմոսս այս :

Սիրեցի՛ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց . զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա :

Շրջեցան զինև երկունք մահու . և վիշտք դժոխոց գտին զիս :

Օնեղութիւն և զանձկութիւն գտի, և զանուն Տեառն կարդացի :

Ո՛ Տէր փրկեա՛ զանձն իմ . ողորմած Աստուած մեր ողորմի, և պահէ զտղայս Տէր:

Ես խոնարհ եղէ, և Տէր կեցոյց զիս . դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ :

փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ . զաչս իմ յարտասուաց . և զոտս իմ 'ի գայթակղութենէ . հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց :

Հաւատացի՛ զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ :

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է :

Զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի, զոր և ետ ինձ :

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացից :

Զաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՛ Տէր ես ծառայ քո եմ. ծառայ, և որդի աղախնոյ քո։

Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագս օրհնութեան. և զանուն Տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա՝ ՚ի գաւիթս տան Տեառն. և ՚ի մէջ քո Երուսաղէմ։

Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Զօրացի ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր, և ճշմարտութիւն Տեառն մնասցէ յաւիտեան։

Աստուած յանուն քում կեցո՛ զիս. և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկնդիր բանից բերանոյ իմոյ։

Զօտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ. և Տէր ընդունօղ հոգւոյ իմոյ։

՚Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիսն իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում Տէր. զի՛ բարի է։

Զամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան. Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն, զի դու Տէր օգներ ինձ, և մխիթարեցեր զիս:

Փառք Հօր, և Որդւոյ:

Քարոզ Առաքելոց, և ամենայն սրբոց,

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք զչարսն պարտեցին՝ նեղութեանցն համբերեցին: Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողոր:

'Ի Սարկաւագ Վարդապետէն ասացեալ:

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո.
զծնօղսն մեր. զվարդապետս.
զեղբարս. զընկերս. զկերակրիչս.
զուխտաւորս. զճանապարհորդս.
զհանգուցիչս, զվաստակաւորս.
զխոստովանօղս. զապաշխարօղս.
զգերիս. զհիւանդս. զննջեցեալս.
զիշխանս. զչարարարս. զբարերարս. զթշնամիս. զատելիս. և
որք պատուիրեցին մեզ հաւատով:

Քարոզ Լուսաւորչի և Խաչի:

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Դարձեալ նոյն շարականն:

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ:

## ՅԵՐԵԿՈՅԵԱ՛Ն ԺԱՄՈՒ:

ԵՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԿԱՐԴԱՑԻ. ԵՒ Տէր լուաւ ինձ յերեկոյս, 'ի վաղորդայն, և 'ի հասարակ աւուր:

Ապասէի Աստուծոյ իմոյ, և ակն ունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ:

Փառք Հօր, և Որդւոյ:

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչ:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Սաղմոս 85:

Խոնարհեցո՛ Տէր զունկն քո, և լո՛ւր ինձ, զի աղքատ, և տնանկ եմ ես:

Պահեա՛ զանձն իմ սուրբ Տէր. փրկեա՛ զծառայս քո Աստուած իմ, որ 'ի քեզ յուսացայ:

Ողորմեա՛ ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապա՛զ. ուրա՛խ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան, որք կարդան առ քեզ:

Ունկնդիր Տէր աղօթից իմոց. և նայեա՛ց 'ի ձայն խնդրուածոց իմոց։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։

Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տէր. և ոչ ոք է որպէս զգործս քո։

Ամենայն ազգս՝ զոր արարեր, եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո Տէր. և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու Տէր, և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած։

Առաջնորդեա՛ ինձ 'ի ճանապարհի քում. և գնացից 'ի ճշմարտութեան քում. և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ. բոլորով սրտիւ իմով փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմութիւն քո. և փրկեցեր զանձն իմ 'ի դժոխոց ներքնոց։

Աստուած անօրէնք յարեան 'ի վերայ իմ. և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու Տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած. երկայնամիտ, բազումողորմ, և ճշմարիտ. նայեա՛ց առ իս, և ողորմեա՛ ինձ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քո. և արա՛ առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ. և ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր, և Որդ։

Փառք քեզ Աստուած՝ փառք քեզ. յաղագս ամենայնի՝ Տէր փառք քեզ։
Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչէ։
Օրհնութիւն և փառք Հօր և Որդ։

Սաղմոս։

Ապրեցո զիս Տէր ’ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս.
Խորհեցան զանօրէնութիւն ’ի սիրտս իւրեանց. զօր ամենայն պատրաստեցան ’ի պատերազմ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի. և թոյնք իժից ’ի ներքոյ շրթանց նոցա։
Պահեա զիս Տէր ’ի ձեռաց մեղաւորի, և ’ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Խորհեցան խափանել զգնացս իմ. թաքուցին ամբարտաւանք զորոգայթ ինձ։
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայթակղութիւն։
Ասացի Տէր Աստուած իմ ես դու. ունկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց։
Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ. հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։
Մի՛ մատներ զիս Տէր ’ի ցանկութիւն մեղաւորաց. Չք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել զիս։
Զի մի՛ երբէք բարձրասցին. և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին, վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։
Արկցես ’ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա. ’ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։

Մարդդ լեզուանւոյ մի յաջողեսցի 'ի վերայ երկրի . զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն 'ի կորուստ :

Ծանեայ՝ զի առնես Տէր զդատաստանս աղքատի, և զիրաւունս տնանկի :

Արդարք գոհասցեն զանուանէ քումմէ . և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց :

Տէր կարդացի առ քեզ . և լուր ինձ . նայեա՛ց 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ քեզ :

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր . համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի :

Դիր Տէր պահապան բերանոյ իմոյ . և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան :

'Ի պատճառել զպատճառս մեղաց՝ ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն . և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա :

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, և յանդիմանն արասցէ . իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ . այլ աղօթք իմ 'ի կամս նորա :

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա . լուիցեն բանից իմոց՝ և քաղցրասցին :

Որպէս թանձրութիւն հողոյ . զի սփռեալ է 'ի վերայ երկրի . ցրուեսցին ոսկերք նոցա մերձ 'ի դժոխս :

Առ քեզ Տէր Տէր են աչք իմ, 'ի քեզ յուսացայ . մի հաներ զհոգի յինէն :

Պահեա՛ զիս յորոգայթէ, որ թագուցաւ ինձ 'ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն :

Ընկցին 'ի ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես՝ մինչև անցից։

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ. և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

'Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝ դու Տէր ծանեար զշաւիղս իմ, 'ի ճանապարհ՝ յոր և գնայի թագուցաւ ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ Տէր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ց Տէր յաղօթս իմ. զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի հալածչաց իմոց. զի հզօր եղեն քան զիս։

Տէր՝ հան 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։

Նու քեզ սպասեն արդարք, մինչև հատուսցես ինձ։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ։

## Քարոզ։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ Տէր Աստուած մեր. որ շնորհեցեր մեզ զտիւս խաղաղութեամբ անցուցանել, և հասանել 'ի ժամ երեկոյիս։ Արժանաւորեա՛ զմեզ Տէր սուրբ սրտիւ

հրեշտակային երգով գոհաբանութիւն մատուցանել Տեառն Աստուծոյ ամենակալիդ. կեցո և ողորմեա:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա. Գ:

Քարոզ կիրակամտից, և ամենայն աւուրց տէրունեաց, Ասացուք. 45.

Քարոզ 'ի տօնի սրբոց, և պահոց:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զթագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան, և վասն միայնոյ սուրբ կաթուղիկէ՝ և առաքելական եկեղեցւոյ. զի զբազում ամս խաղաղութեամբ տացէ մեզ Տէր Աստուած մեր. և զթագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ վասն մեծի սուրբ և ահաւոր անուան իւրոյ. զպետս գաւառաց, զզօրավարս, զզօրագլուխս, զժողովուրդս, զմուտս և զելս մեր խաղաղութեամբ պահեսցէ, և զամենայն պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ 'ի մէնջ.

Տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի:

Զերեկս մերձեալ, և զառաջիկայ գիշերս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութեան պահապան:

Զքաւութիւն և զթողութիւն յանցա:

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօր:

Եւ ես և վասն միաբան ճշմարիտ և սուրբ ։
Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ։
Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ ։

Սաղմոս ։

Փրկեա՛ զմեզ 'ի փորձութենէ, և յամենայն վտան-
գից մերոց ։
Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի ա-
ղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուա-
ծածնին. և իջանելոյ 'ի վերայ մեր ողորմու-
թեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենա-
կալ Տէր Աստուած մեր կե ։
Օրհնութիւն և փառք Հօր, և Որդւոյ, և Հոգ-
ւոյն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս. ուստի եկեսցէ
ինձ օգնութիւն ։
Օգնութիւն ինձ 'ի Տեառնէ եկեսցէ. որ արար
զերկինս և զերկիր ։
Մի՛ տար 'ի սասանութիւն զոտն քո. և մի՛ ննջես-
ցէ պահապան քո ։
Որպէս ոչ ննջէ, և ոչ 'ի քուն երթայ պահա-
պանն Իսրայելի ։
Տէր պահեսցէ զքեզ. և Տէր ընկալցի աջոյ ձե-
ռամբն իւրով ։
Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ. և մի՛ լուսինն
'ի գիշերի ։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ. պահեսցէ Տէր զանձն քո։

Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայսմհետէ մինչև յաւիտեան։

Փառք Հօր, և Որդւոյ։

Քարոզ։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։ Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Աըջահման փոխ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն՝ ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասասցէ Տեառն ընդունօղ իմ ես դու. ապաւէն իմ Աստուած՝ և ես յուսամ 'ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանիցն խռովութենէ։

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ոչ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ։

Յիրէ՝ որ շրջի 'ի խաւարի. 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր։

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու. և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք՝ և տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո ՚ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

՚Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։

՚Ի վերայ իժից՝ և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ՝ և փրկեցից զնա. հովանի եղէց նմա. զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ՚ի նեղութեան։

Փրկեցից՝ և փառաւոր արարից զնա. երկայնաւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ՚ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն Տեառն իւրոյ. և որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Նոյնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ՚ի վերայ մեր։

Ողորմեա՛ց մեզ Տէր՝ ողորմեա՛ց մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։

Աստուած յանուան քում կեցո՛ զիս, և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լո՛ւր աղօթից իմոց. ունկնդիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրե-
ցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած
առաջի իւրեանց :

Ահա Աստուած օգնական իմ. և Տէր ընդունօղ
հոգւոյ իմոյ :

'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմար-
տութեամբ քով սատակեա զնոսա :

Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և
խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և 'ի
թշնամիս իմ ետես ակն իմ :

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. այժմ
և միշտ.

### Քարոզ :

Եւ մեք միաբան զողորմութիւն 'ի Տեառնէ խնդ-
րելով ասասցուք ամենեքեան միաբանութեամբ :

Տէր ողորմեա. Գ :

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո.
զծնօղսն մեր. զվարդապետս.
զեղբարս. զընկերս. զկերակրիչս.
զուխտաւորս. զճանապարհորդս.
զհանգուցիչս, զվաստակաւորս.
զխոստովանօղս. զապաշխարօղս.
զգերիս. զհիւանդս. զննջեալս.
զիշխանս. զչարարարս. զբարե-
րարս. զթշնամիս. զատելիս. և
որք պատուիրեցին մեզ հաւատով :

Փոխ կերակրականց ։

Ահա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր, որ կայք 'ի տան Տեառն, և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ ։

'Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր ։

Օրհնեսցէ զմեզ Տէր 'ի Սիովնէ, որ արար զեր-կինս և զերկիր ։

Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ ։.

Երկրպագից 'ի տաճար սուրբ քո, և խոստովան եղէց անուան քում վասն ողորմութեան, և ճշմարտութեան քո ։

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յո-րում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զզօրութիւնս յանձն իմ ։

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի. զի լուան զբանս բերանոյ քո. և օրհնես-ցեն զճանապարհս քո ։

Մեծ են փառք Տեառն. բարձր է Տէր. զխո-նարհս տեսանէ, և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ նեղութեանց, կե-ցուսցես զիս 'ի բարկութենէ թշնամւոյն ։

Ձգեցեր զձեռն քո, և փրկեաց զիս աջ քո, և Տէր հատուսցէ ընդ իմ ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձե-ռաց քոց մի՛ անտես առներ ։

Աստուած յանուան քում կեցո զիս. և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ:
Աստուած լո՛ւր աղօթից իմոց. ունկնդիր բանից բերանոյ իմոյ:
Օտարք յարեան ՚ի վերայ իմ. և հզօր ք խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:
Ահա Աստուած օգնական իմ. և Տէր ընդունօղ հոգւոյ իմոյ:
՚Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիսն իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա:
Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է:
Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ՝ ետես ակն իմ:
Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և:

Քարոզ:

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ՚ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր. Տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի:

Քարոզ յետ Մեծացուսցէին:

Սուրբ զԱստուածածինն՝ և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր. ամենակալ Տէր:

Քարոզ խաչի:

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ:

Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քարոզ Առաքելոց, և ամենայն սրբոց:

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր. որք զչարսն պարտեցին՝ նեղութեանցն համբերեցին: Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողոր:

Քարոզ Եկեղեցւոյ:

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ:

ՀՍՍՌ Арм.ССР